https://doi.org/10.46991/hc.2023.20.2.150

The Formation and Transformation of Korean Identity

Anna Tomeyan
https://orcid.org/0009-0003-2781-5023
YSU Chair of the World History, Applicant
anna.tomeyan@ysu.am

Key words: Korean peninsula, identity, nation, culture, value system, confucianism, colonialism.

The typology and understanding of Korean identity are considered in this article. Here we consider the transformation of Korean identity under the influence of historical process, especially the Japan's policy of trying to assimilate the Korean nation to the Japanese and hinder the revival of Korean identity, and the loss of independence forced the Korean nation to undergo transformation of identity and absorb Western and modern values. We also consider Confucian values which are the basis of the Korean national identity. Korean identities are also analyzed here trying to reveal the similarities and features.

Կորեական ինքնության ձևավորումը և կերպափոխումը

Աննա Տոմեյան
ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոն, հայցորդ

Հիմնաբառեր՝ Կորեական թերակղզի, ինքնություն, ազգ, մշակույթ, արժեհամակարգ, կոնֆուցիականություն, գաղութատիրություն:

Հոդվածում ուսումնասիրվում են կորեական ինքնության տիպաբանությունն ու պատկերացումները: Դիտարկվում է կորեական ինքնության կերպափոխումը պատմական գործընթացների ազդեցությամբ, մասնավորապես Ճապոնիայի վարած քաղաքականության հետևանքները, որով փորձում էին կորեական ազգը ձուլել ճապոնականին և թույլ չտալ կորեական ինքնության վերածնունդը, իսկ անկախության կորուստն ստիպեց կորեական ազգին գնալ ինքնության կերպափոխման ճանապարհով՝ կլանելով արևմտյան ու արդիական արժեքները: Ինչպես նաև անդրադարձ է կատարվում կոնֆուցիական արժեքներին որպես կորեական ազգային

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 150-158.
Received: 01.06.2023
Revised: 24.08.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

ինքնության գիտակցության հիմք: Վերլուծվում են կորեական ինքնությունները՝ վեր հանելով նմանություններն ու առանձնահատկությունները:

Формирование и трансформация корейской идентичности

Анна Томеян
ЕГУ, Кафедра Всеобщей истории, соискатель

Ключевые слова: Корейский полуостров, идентичность, нация, культура, система ценностей, конфуцианство, колониализм.

В статье рассматриваются типология и понимания корейской идентичности. Рассматривается трансформация корейской идентичности под влиянием исторических процессов, особенно последствия политики Японии, которым они пытались ассимилировать корейскую нацию с японцами и предотвратить возрождение корейской идентичности, а потеря независимости вынудила корейский народ пойти по пути трансформации идентичности, впитывая западные и современные ценности. Также рассматриваются конфуцианские ценности как основа сознания корейской национальной идентичности. Анализируются корейские идентичности, выявляются сходства и особенности.

* * *

Ներածություն: Կորեայի ազատագրումից ի վեր Կորեական թերակղզում ձևավորվեցին երկու տարբեր ինքնություններ: Ճապոնական գաղութատիրությունը, Սառը պատերազմը, Կորեական պատերազմը խոչընդոտեցին կորեական ազգի ինչպես քաղաքական միասնությանը, այնպես էլ միասնական ազգային ինքության ստեղծմանը: Ինքնության արդիականացման գործընթացում կորեացիները ձևավորեցին ինքնության ոչ հստակ պատկերացում արևմտյան ինքնության և ազգային մշակույթի հակադրության ազդեցության ներքո: Ազգային ինքնության պատերացումները մասամբ նաև ազգի պատմական գիտակցության արդյունք էր, ինչը շեշտում է հյուսիսկորեական գաղափարախոսությունը նաև:

Հարավկորեական ինքնության պատկերացումներում հակադրվում են արևմտյան և ավանդական արժեքները, պահպանելով կոնֆուցիական արժեքների դերը, վերջինս ազդում է ազգի գիտակցության և փոխհարաբերությունների վրա և ունի իր ներդրումն ինքնության ներսում՝ ազգի համախմբվածությունը պահպանելու գործում: Հյուսիսը, զարգացնելով սեփական գաղափարախոսությունը, ձևավորեց ազգային ինքնության յուրահատուկ պատկերացումները՝ հավատարիմ մնալով ազգային արժեքներին: Բայց հյուսիսկորեական ինքնությունը տարանջատվեց հարավկորեական ինքնությունից՝ առաջին հերթին վերացնելով մշակութային նմանությունները: Հետևաբար նման մշակութային բաժանարար գծերը միասնական ու ներդաշնակ ինքնության ստեղծումը և քաղաքական միավորումը դարձնում են խնդրահարույց:

Կորեական ինքնության կերպափոխումը պատմական համատեքստում: Արևմտյան աշխարհում ազգ հասկացությունը ստեղծվել է միայն կապիտալիզմի զարգացման ընթացքում:

Արդյոք ազգը լեզվամշակութային համայնք է, ազգայնականության գաղափարի հիման վրա ստեղծված «երևակայական համայնք է», որը գոյություն ունի միայն մեր պատկերացումների սահմաններում: Նախ՝ ինքնությունն իրենից ենթադրում է ազգի սոցիալ-մշակութային միատարրություն: Բենեդիկտ Անդերսոնն առաջ է քաշում «երևակայական համայնք» ձևակերպումը, իսկ ազգը բնութագրում է որպես «երևակայական քաղաքական համայնք», որոնք հանդես են գալիս որպես ինքնիշխան երևույթ և ունեն սոցիալական կառուցվածք, բայց սահմանափակ ու հորիզոնական պատկերացմամբ [Anderson, 2006, 6-7]: Այսինքն՝ համայնքը, հասարակությունը գոյություն ունեն երևակայության սահմաններում, միևնույն ժամանակի ու տարածության մեջ՝ միավորելով հասարակությանը բնորոշ տարրերը և ստեղծելով մշակութային «երևակայական համայնքներ»: Ի վերջո՝ ինքնությունը սերտորեն կապված է բնակության տարածքին, պատմությանը, մշակույթին, քաղաքական իդեալներին, ինչպես նաև ազգի պատկերացումներին և ենթակա է փոփոխության պատմության ցանկացած կետում:

Միևնույն ժամանակ որոշ ուսումնասիրողներ առանձնացնում են ազգի և ինքնության ընկալումները Արևմտյան և Արևելյան աշխարհներում՝ արևելյան երկրներին համարելով բացառիկ «պատմական ազգեր» [Hobsbawm, 2012, 66]: Մասնավորապես կորեական ազային ինքնությունը գաղափարական և իմացաբանական իրողություններով տարբերվում է արևմտյան պատկերացումներից: Չնայած ինքնատիպ պատկերացումներին՝ կորեական ինքնությունը կլանել է օտար մշակույթների տարրերը և բազմամշակութայնության հիման վրա որոշակիորեն կերպափոխվել [임, 2010, 30] :

Կորեական թերակղզում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեցին միանման, բայց և էական տարբերություններով երկու կորեական ինքնություններ՝ հիմքում ունենալով «մենք» և «դուք» հասկացությունները: Նման կերպ ձևավորված և պայմանավորված քաղաքական, գաղափարական գործոններով երկու հասարակությունները միմյանց ընկալում են որպես «թշնամի», սա բարդացնում է հետագա միասնական ինքնության ստեղծման գործընթացը՝ առաջ մղելով համատեղ խաղաղ ապրելու ու համագործակցելու անհրաժեշտությունը [Heo, 2020, 253]: Ազգային ինքնության ձևավորման գործում կարևոր է գաղափարախոսության դերը: Այս գաղափարախոսությունն էլ դարձավ առաջնային գործոններից մեկը, երբ կորեական ազգը բաժանվեց երկու մասի. մի հատվածը գնաց կոմունիստական ուղով, մյուսը՝ կապիտալիստական [Heo, 2020, 254]: Ժամանակակից կորեական ինքնությունը ձևավորվել է անցյալի մշակութային արժեքների ու նոր ձևավորված մշակութային արժեքների միջև եղած հակասությունների արդյունքում:

1945 թ. Կորեայի ազատագրումից հետո կորեական ինքնիշխանության, տնտեսության վերականգնումը, միասնական պետության ստեղծումը առաջնահերթ խնդիրներից մեկն էր, սա կարևոր էր ինքնության պահպանման և ազգի ներսում տարբերությունների և խզման բացառման առումով: Գաղութացված ժողովուրդների մշակույթը հաճախ աղավաղվում ու ենթարկվում էր փոփոխության, իսկ որոշ մտավորականներ ուղղակի ընդունում էին գաղութարարների մշակույթը (հետագայում նման մտավորականներն իրենց հայացքը պետք է փոխեին Ճապոնիայից դեպի Արևմուտք), քանզի Կորեայի գաղութացումը պատճառ դարձավ, որպեսզի կորեական

հասարակության ներսում կասկածի տակ դրվեր կորեական ազգային մշակույթի արժանահավատությունը և փորձ արվեց գնալ արդիականացման ուղով [Han, 2003, 9-15]։ Հաճախ կորեական մշակույթը համեմատության մեջ էր դրվում օտար մշակույթների հետ վեր հանելով սեփական թերությունները։ Հարավային Կորեայում տնտեսության զարգացումից հետո այլ մոտեցում ցուցաբերեցին ազգային մշակույթի նկատմամբ, այն սկսեց արժևորվել որպես զարգացման կարևոր գործոն։

Ճապոնական գաղութատիրության տարիներին ճապոնական կառավարությունը առաջ էր քաշել ճապոնացիների և կորեացիների միևնույն ծագումն ունենալու հայեցակարգը [Hyung, 2020, 57]։ Ճապոնական կառավարությունն արգելեց կորեերենի ու կորեական պատմության ուսուցումը դպրոցներում, կորեացիները պետք է հրաժարվեին իրենց կորեական անուններից և ընդունեին ճապոնական անուններ, իսկ ճապոներենը պետք է լիներ կորեացիների համար ազգային լեզու։ Կորեացիները իրավունք չունեին զբաղեցնել նույնիսկ Կորեայի գեներալ-նահանգապետի կամ այլ պետական պաշտոն [Anderson, 2006, 98-99]։ Ճապոնիայի նպատակն էր երկու ազգերի միաձուլումը և կորեական ազգային ինքնության վերածննդի կանխարգելումը։ Այսինքն քաղաքական ռեժիմը, այս դեպքում Ճապոնիան, ազդում էր կորեական ինքության պահպանման վրա, քանզի հաճախ հենց քաղաքական ուժը կարող էր հնարավոր դարձնել ազգի հիշողության կորուստը, ազգային նարատիվների ընտրությունը և ազգի ինքնության գոյատևումը տանել այլ ճանապարհով [Heo, 2020, 84]։ Ճապոնական գաղութատիրությունը փոխեց ոչ միայն կորեացիների վերաբերմունքը իրենց ազգային մշակույթի նկատմամբ, այլև ինչպես նշում է կորեացի հեղինակ Հան Կյուն Կուն՝ փոխեց կորեացիների «աշխարհը հասկանալու ուղիները» [Han, 2003, 20]։ Գաղութատիրությանը հաջորդում է Կորեական պատերազմը (1950-1953 թվականներ), որը պետք է ավելի մեծ անջրպետ ստեղծեր կորեական ազգի մեջ։

Բայց պետք է հաշվի առնել, որ պատմությունը տարբեր կերպ է ներկայացվում երկու կորեական պետություններում՝ կախված քաղաքական ուժերից ու գաղափարախոսություններից [Heo, 2020, 18]։ Այս տեսանկյունից կարևոր էր ազգային պատմության շարադրումը, այս ուղղությամբ աշխատանքներ ծավալեցին և՛ Հարավի, և՛ Հյուսիսի պատմաբանները։ Նրանք չսահմանափակվեցին սոսկ չինական տեքստային աղբյուրներով, այլ նաև օգտագործեցին հնագիտական, ազգագրական նյութերը։ Պատմաբանները արմատավորեցին այն գաղափարը, որ կորեական ինքնությունն ի հայտ է եկել մոտավորապես մ.թ.ա. 3000-2000 թվականներից՝ հիմնվելով առասպելաբանության վրա։ Մասնավորապես նախ կորեացիները ծագում են Դանգունից, որը համարվում է նրանց նախահայրը (Դանգունը համարժեք է մեր հայոց պատմության մեջ հայտնի Հայկ նահապետին)։ Նման տեսություններից մեկի համաձայն Դանգունը համարվում էր արևելաասիական բոլոր քաղաքակրթությունների ստեղծողը (հետագայում Հյուսիսային Կորեայի գաղափարախոսության մեջ պետք է ամրագրվեր այն գաղափարը, որ համաշխարհային քաղաքակրթությունը առաջացել է Կորեական թերակղզում) [Hyung, 2020, 58]։ Դանգունից սերելու գաղափարը ցույց է տալիս կորեացիների ռասայական միատարրությունը և տարբերությունը հարևան երկրներից։ Այստեղ կա նաև միասնականության գաղափարը՝ մերժելով կորեական ինքնության բաժանումը երկու մասի։ Սրանով մերժվում էր նաև կորեական ազգի 19-րդ դարում ստեծվելու գաղափարը [Kim, 2014, 97]։ 1909 թ. ստեղծվել էր կրոնական շարժում՝ Դենջոնիզմ կամ Դանգունիզմ, սրանով առաջ էր քաշվում Դանգունի

պաշտամունքը, այս պաշտամունքի հետևորդները ազատագրական պայքար ծավալից Ճապոնիայի դեմ: Առասպելաբանությունում հաջորդը հերոսներն են, որոնք պայքարել են օտար զավթիչների դեմ և կորեական բանակին առաջնորդել են դեպի հաղթանակ, նման հերոսների դերում հիմնականում հանդես են գալիս թագավորներն ու գեներալները (ծովակալ Լի Սուն Սին, արքա Թեջոն) [Hyung, 2020, 1-2]:

Կոնֆուցիական արժեքները: Ինքնության Հարավ-Հյուսիս տիպաբանությունը: Կորեական ինքնության մեջ մեծ տեղ է հատկացվել կոնֆուցիականությանը: Կորեական մշակույթը իր մեջ ներառում է ավելի շատ կոնֆուցիական արժեքներ, քան չինական մշակույթը: Ժամանակակից արժեքները (հավասարություն, մարդու իրավունքներ ևն) մուտք գործելով կորեական հասարակություն կոնֆուցիականության արժեքների կարևորությունը նվազեցրել են անցյալի համեմատ: Հատկապես առաջ է գալիս հավասարության գաղափարը, քանզի կոնֆուցիականությունը կարևոր չափանիշ էր համարում տարիքը և առաջ էր քաշվում «անհավասարությունը»՝ հիերարխիկ կառուցվածքը մարդկային փոխհարաբերություններում, որոնք կարգավորվում էին էթիկայի կանոններով ու պարտականություններով: Նման արժեքներն արմատավորված են կորեական ինքնության մեջ ու առօրյա կյանքում (որդիական բարեպաշտությունը, հարգանքը մեծերի նկատմամբ ևն) [김, 2020, 217-220]: Նույնիսկ կարող ենք ասել, որ կոնֆուցիական արժեքներն «ընկած են կորեացիների կրոնական մտքի հիմքում», այսինքն անկախ կրոնից կոնֆուցիական արժեքները կորեացիների համար համընդհանուր արժեքներ են և մարդկային հարաբերությունների, վարվելակերպի նորմեր: Կորեական արժեքների մեջ, ըստ կոնֆուցիականության, առաջնային են կոլեկտիվ արժեքները, որոնք առաջնահերթային են խմբային ներդաշնակության համար՝ ընտանիք, ազգ, էթնիկ խմբեր ևն: Այս կոլիկտիվ արժեքները չունեն որևէ քաղաքական, պետական միտում [김, 2020, 221-222]: Բ. Անդերսոնը ևս ազգի ինքնությունը կարևորում էր անհատական ինքնությունից:

1910 թվականից հետո կոնֆուցիականության հետևորդները ենթարկվեցին քննադատության: Արտաքին ազդեցությամբ կորեացիները ենթադրում էին, որ կոնֆուցիականությունն ու ազգային մշակույթի որոշ ավանդույթներն էին մեղավոր անկախության կորստի, կորեական մշակույթի «այլասերման» համար և անհրաժեշտ էին համարում արդիականացնել մշակույթը [Han, 2003, 11] : Կորեական ինքնության վերաբերյալ կոնֆուցիականության հետևորդներն ունեին տարբեր կարծիքներ, մի մասը կարծում էր, որ կորեական մշակույթը նույնական է չինական մշակույթին, իսկ մյուս մասը առաջ էր քաշում Դանգունից սերելու գաղափարը, ցույց տալով կորեական մշակույթի առանձնահատկությունները, քաղաքակիրթ և չինականին ոչ նույնական լինելը: Կոնֆուցիական շատ արժեքներ թողնվել են անցյալում, նույնիսկ կրթական համակարգը, որը հիմնված էր կոնֆուցիականության սկզբունքների վրա, դեռ 19-րդ դարի վերջին կուլ էր գնացել արևմտյան կրթական համակարգին: Այժմ կորեական ինքնությունը պահպանվում է այդ արդիականացված կրթական համակարգի միջոցով [So, 2012, 797-798] :

Հարավային Կորեան գնաց ժողովրդավարացման ճանապարհով և պետք է հարմարվեր գլոբալացված աշխարհին, պատմականն ու ավանդականը պետք է միաձուլվեին արևմտյանին՝

չկարողանալով բացառել վերջինիս: Ի վերջո ստեղծվում է մի ինքնություն, որը ստեղծվելով պատմական անցյալի հիման վրա, հարմարվում և ընդունում է ժամանակակից փոփոխությունները: Հարավային Կորեայում, չնայած արևմտյան մշակույթի որոշ ազդեցությանը, կարևորվում է ազգային մշակույթի դերը, որը ենթադրում է միատարրություն և ենթակա չէ օտար մշակույթների ազդեցությանը [Villanueva, 2020, 11]: Այստեղ միատարրություն, միևնույն ազգին պատկանել ասելով հարավկորեացիները հասկանում են միևնույն լեզվով խոսելը, տվյալ տարածքում ապրելը, կորեական քաղաքական և իրավական համակարգին ենթարկվելը, սակայն քիչ շեշտ է դրվում կորեական արյան կամ Դանգունից սերված լինելու գաղափարներին [Villanueva, 2020, 12-14]: Այլ կերպ ասած հարավկորեացիները ավելի շատ հակված են Կորեայի Հանրապետությանը, քան կորեական ազգին [Denney Steven, South Korean Identity: The Return of Ethnic Exclusivism]: Չնայած Հարավային Կորեան երկար ժամանակ համարվում էր էթնիկապես միատարր, այնուամենայնիվ, այսօր այս միատարրությունը որոշ չափով կասկածի տակ է առնվում, քանզի ավելանում է Հարավային Կորեայում աշխատող ու սովորող օտարերկրացիների, ինչպես նաև օտարերկրացիների հետ ամուսնացող կորեացիների թիվը: Սա արդյունք էր Կորեայի նկատմամբ հետաքրքրության աճով, ի տարբերություն նրա, որ նախկինում Կորեան առանձնապես հետաքրքրություն չուներ Արևմուտքի համար: Իրականացված հարցումների համաձայն Հարավային Կորեայում բնակվող օտարերկրացիների նկատմամբ կորեացիների դրական վերաբերմունքը աստիճանաբար նվազել է և հարավկորեական հասարակությունը ոչ հարմարվողական դիրքորոշում ունի բազմամշակութայնության նկատմամբ: Ավելի մեղմ է վերաբերմունքը նույն էթնիկ պատկանելություն ունեցողների նկատմամբ՝ հյուսիսկորեացի միգրանտներ, միջազգային ամուսնություններից ծնված երեխաներ [Denney Steven, South Korean Identity: The Return of Ethnic Exclusivism]: Իսկ օտարերկրացիների նկատմամբ կառավարության խրախուսական քաղաքականությունը պայմանավորված է տնտեսական գործոնով:

Կորեական պատերազմից ու տնտեսության «հրաշքից» հետո, երբ կորեական մշակույթը դադարեց թերագնահատվելուց, Հարավային Կորեայում ազգային մշակույթը սկսեցին օգտագործել բիզնեսի, տնտեսության, ֆիլմարտադրության և այլ ոլորտներում ընտրելով ազգային մշակույթի որոշ իրողություններ ու ներկայացնելով դրանք աշխարհին իրենց տեսանկյունից:

Հարավային Կորեան, ի տարբերություն Հյուսիսային Կորեայի, վերջինիս նկատմամբ չունի ագրեսիվ տրամադրություններ: Բայց հասարակության ներսում ընկալումները տարբեր են: Թերևս հիմնականում մեծահասակները, հակված են նրանց համարել թշնամիներ, սա կարող ենք բացատրել Կորեական պատերազմի ունեցած հետևանքներով, կրած մարդկային ու նյութական կորուստներով: Իսկ մի մասն ունի չեզոք վերաբերմունք հյուսիսկորեացիների նկատմամբ՝ ընկալելով որպես հարևաններ: Հարավկորեացիներն իրենց համարում են հյուսիսկորեացիներից առանձին ազգ ու պետություն, նույն ընկալումներն ունեն նաև հյուսիսկորեացիները: Բայց և զուգահեռաբար աճում են բացասական ընկալումները, սա հետևանք է ազգային ինքնության զգացողության թուլացման և անվստահության, հետևաբար նաև նվազում է ազգի վերամիավորման ցանկությունը, հատկապես նոր սերնդի շրջանում:

Այնուամենայնիվ, հարավկորեական ազգային ինքնությունը կազմավորվեց պատերազմի ընթացքում և հիմնավորեց այն, որ Հյուսիսային Կորեան կոմունիստների կողմից ստեղծված ագրեսոր պետություն է և պետք է պաշտպանել կորեական ազգը կոմունիստների ներխուժումից:

Հյուսիսկորեական ինքնությունն ու ժողովրդին հասկանալու համար անհրաժեշտ է ընկալել նախ պետական գաղափարախոսության՝ ջուչեի գաղափարներն ու դրանց փիլիսոփայական հիմքերը: Հյուսիսային Կորեան ստեղծեց Հարավից էականորեն տարբերվող պետություն և նոր ինքնություն՝ շեշտելով Հարավի հետ ունեցած տարբերությունները: Հետգաղութային շրջանում կոմունիզմը տնտեսության ստեղծման և հետամնացության հարցի լուծման լավագույն միջոց էր համարվում նոր պետության հիմնադիրների համար [Armstrong, 2004, 3]: Բաժանումից հետո սկսվեց պետական գաղափարախոսության ձևավորումը, որը հիմք դարձավ հյուսիսկորեական ինքնության համար: Հյուսիսային Կորեայի առաջնորդները նշում էին, որ այս գաղափարախոսությունը ձևավորվել է հակաճապոնական պայքարի արդյունքում, այսինքն ունի պատմական հիմք [김, 1982, 2-8]: Բացի այդ հյուսիսկորեական պատմագրությունը պնդում է, որ ազգային-ազատագրական պայքարում առաջնային դերակատարում են ունեցել Հյուսիսի առաջնորդները՝ ցույց տալով Հյուսիսային Կորեայի գերազանցությունը Հարավի նկատմամբ: Հյուսիսային Կորեային հաջողվեց ստեղծել միասնական ազգ օգտագործելով քաղաքական և գաղափարական գործիքները [Chung, 2011, 106]: Սակայն պետք է ասել, որ հյուսիսկորեական գաղափարախոսությունն ու ինքնությունը Կիմ Իր Սենի գաղափարների ու անձի պաշտամունքի հիման վրա էին ստեղծված: Իսկ Կիմ Իր Սենը իր հերթին այս գաղափարները փոխառել է 20-րդ դարասկզբի կորեացի գիտնականներից, որոնք ոգեշնչված էին կոնֆուցիական գաղափարներից, ինչպես նաև առկա են որոշ մառիստական գաղափարներ:

Հյուսիսկորեական ինքնությանը հատկանշական է նաև հին սովորույթների պահպանումը Չոսոն դինաստիայից, օրինակ իշխանության ժառանգական բնույթը երկրի մեկուսացվածությունը: Եվ ընդհանրապես Հյուսիսային Կորեան շեղվել էր մարքս-լենինյան գաղափարներից՝ հետևելով ավանդական կորեական արժեքներին: Պահպանեցին ավանդական հագուստը, երաժշտությունը, կորեական լեզուն և իրականացրեցին «լեզվի մաքրում», որի շրջանակներում առաջին հերթին արգելվեց չինական հիերոգլիֆների օգտագործումը [Kim, 2022, 76-80]:

Գաղափարախոսությամբ մարդու ֆիզիկական կյանքը ստորադասվում էր քաղաքական ու սոցիալական կյանքին: Հյուսիսային Կորեայում ևս մարդկային հարաբերությունները կարգավորվում են կոնֆուցիականության սկզբունքներով՝ հիերարխիկ կառուցվածքով, փոխադարձ հարգանքով, հորիզոնական ընկերակցության գաղափարով: Հետևելով կոնֆուցիականությանը՝ կարևոր էր համարվում կոլեկտիվ ինքնությունը, սակայն այստեղ առկա է պետական շահը:

Ըստ գաղափարախոսության մարդը համարվում է սոցիալական էակ և ունի չաջուսոն՝ գիտակցություն ու ստեղծագործականություն: Մարդուն որպես սոցիալական էակ կենդանի է պահում քաղաքական և սոցիալական ամբողջականությունը: Մարդը որպես հասարակության ու պատմության սուբյեկտ, օգտագործելով իր անկախությունը, ստեղծագործական ունակություններն ու գիտակցությունը, ինքն է կերտում իր ճակատագիրն ու վերափոխում աշխարհը: Բայց մարդը չի կարող այս ամենն իրագործել առանց «անհրաժեշտ ղեկավարության»՝ առաջնորդի և գաղափարախոսության:

Մի խոսքով հյուսիսկորեական ազգային ինքնությունը քաղաքական ինքնության արդյունք էր, իսկ էթնիկ պատկերացումները ստորադասվում էին կուսակցության շահերին:

Եզրակացություններ: Այսպիսով՝ այսօր Կորեական թերակղզում բնակվում է մեկ ազգ, որում զարգացել են երկու տարբեր հասարակություններ՝ արմատավորելով «մենք» և «նրանք» մտածողությունը: Սա պայմանավորված էր քաղաքական և գաղափարախոսական պառակտվածությամբ և արտաքին միջամտությամբ:

Կորեական ինքնության պատկերացումները սկիզբ են առնում առասպելաբանությունից և կերպափոխվում է դեռևս Ճապոնիայի տիրապետության տարիներին: Չնայած կերպափոխմանն ու բաժանմանը երկու կորեական ինքնությունները պահպանեցին ավանդականը, որն էապես ազդված էր կոնֆուցիականությունից:

Հարավային Կորեայի ինքնությունը սահմանվում է որպես արդիական, բազմամշակութային: Ի հակադրություն՝ Հյուսիսային Կորեայի ինքնությունը ձևավորվեց ավանդականի, միատարրության և կոմունիզմի շուրջ: Չնայած այս երկուսն ունեն նույն լեզուն ու պատմական հիշողությունը, բայց տարբեր կերպ են պատկերացնում ազգային արժեքներն ու գաղափարները: Սա բարդ խոչընդոտ է միասնական ազգային ինքնության ստեղծման համար, քանզի միավորումը չի ենթադրում միայն տնտեսական ու քաղաքական միասնություն:

Կարելի ասել նաև, որ եթե հյուսիսկորեական ինքնությունը կայուն վիճակում է և միաձուլված քաղաքական ռեժիմին, ապա հարավկորեական ինքնությունը պակաս կայուն է ու բազմամշակութային և ճգնաժամային իրավիճակում կարող է վերածվել հեշտ կառավարելի ամբոխի:

Գրականության ցանկ

Anderson B. 2006, Imagined Communities Reflections on the Origin and Spread of Nationalism, London, Verso, 240 p.

Armstrong C. 2004, The North Korean Revolution, 1945-1950, Cornell University Press, 265 p.

Chung Y. S. 2011, Identity Politics in the Democratic People's Republic of Korea (DPRK), The Review of Korean Studies, Vol. 14, No. 3, 101-120 p.

Denney S., South Korean Identity: The Return of Ethnic Exclusivism? https://sinonk.com/2016/10/28/south-korean-identity-the-return-of-ethnic-exclusivism/, 12.03.2023

Han K. K. 2003, The Anthropology of the Discourse on the Koreanness of Koreans, Korean Journal, Vol. 43, No. 1, 5-31 p.

Heo J. Y. 2020, Contentious Narratives on National Identity of South Korea: How to Understand the Self and the Significant Others, North Korea and the United States, Berlin, 303 p.

Hobsbawm E. 2012, Nations and nationalism since 1780: programme, myth, reality, Cambridge University Press, 206 p.

Hyung I. P. 2020, Constructing "Korean" Origins: A Critical Review of Archaeology, Historiography, and Racial Myth in Korean State-Formation Theories, Harvard University Asia Center, 543 p.

Kim A. S. 2022, Rebuilding Lost Identity: Rethinking Korean Reunification as an Imagined Community of Shared National Identity, UCLA Pacific Basin Law Journal, Vol. 39, No. 1, 61-98 p.

Kim J. 2014, National Identity and Attitudes Toward North Korean Defectors, Joint U.S.-Korea Academic Studies, Vol. 25, 95-111 p.

So K. 2012, The formation of the South Korean identity through national curriculum in the South Korean historical context: Conflicts and challenges, International Journal of Educational Development, Vol. 32, Issue 6, 797-804 p.

Villanueva O. 2020, Alternative Views: Korean Identity, College of East Asian Studies, Capstone, 1-25 p.

김종만, 김은기 2020, 가치관을 통해 본 한국인의 문화적 정체성: 유교와 무교를 중심으로, 신학과 사회, 제34권 3호, 193-235

김정일 1982, 주체사상에 대하여, 조선로동당출판사, 86

임형백 2010, 한국인의 정체성의 다문화적 요소: 역사-인류학적 해석, 다문화와 평화, 제4 권 2 호, 10-43

References

Kim Jong Man, Kim Eungi 2020, Gachigwaneul tonghae bon hanguginui munhwajeong jeongcheseong: yugyowa mugyoreul jungsimeuro, Sinhakgwa sahoe, je34 gwon 3 ho, 193-235 **(in Korean)**

Kim Jeong Il 1982, Juchesasange daehayeo, Joseollodongdangchulpansa, 86 **(in Korean)**

Im Hyeong Baeng 2010, Hanguginui jeongcheseongui damunhwajeong yoso: yeoksa-illyuhakjeong haeseok, Damunhwawa pyeonghwa, je4 gwon 2 ho, 10-43 **(in Korean)**